# Մնանկ ճանաչված Հակոբ Ազատի Ձորոյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի կրկնաճուրդ

2026-10-19 14:13:50

| | |
|---|---|
| Հայտատու | Ֆիզիկական անձինք |
| Տեսակ | Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ |
| Հիմք | Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված |

ՀՀ սնանկության դատարանի 02.03.2026թ. թիվ ՍնԴ/0709/04/25 որոշման համաձայն՝ 12.10.2026թ. ժամը 13:00-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի նստավայրում /ք.Երևան, Արշակունյաց պողոտա 5, 1-ին հարկ, 109 սենյակ/ Հակոբ Ձորոյանի սնանկության գործով կառավարիչ Ռ. Եղյանի կողմից հայտարարված աճուրդը տեղի չի ունենցել գնորդ չլինելու պատճառով:
Նկատի ունենալով վերոգրյալը՝ 05.11.2026թ. ժամը 13:00-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի նստավայրում /ք.Երևան, Արշակունյաց պողոտա 5, 1-ին հարկ, 109 սենյակ/ սնանկության գործով կառավարիչ Ռ. Եղյանի կողմից կանցկացվի սնանկ ճանաչված Հակոբ Ազատի Ձորոյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի աճուրդ-վաճառքը հրապարակային սակարկությամբ, բաց դասական եղանակով՝ 2 (երկու) առանձին լոտերով:
Լոտ 1 – ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նոր Արտագերս գյուղ, թիվ 1166654 վկայականի համարով տնամերձ հողամաս, հողամասի չափը՝ 0,190 հա, մեկնարկային գինը՝ 965 140 ՀՀ դրամ:
Լոտ 2 – ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նոր Արտագերս գյուղ, թիվ 1228126 վկայականի համարով գյուղատնտեսական նշանակության հողամաս, հողամասի չափը՝ 0,53 հա, մեկնարկային գինը՝ 972 813 ՀՀ դրամ:
Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ 29.10.2026թ. ժամը 18:00 կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան՝ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով:
Հայտին կից ներկայացվում է աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարման անդորրագրերը, ֆիզիկական անձինք՝ նաև իրենց անձնագրի պատճենը, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ նաև իրենց պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև հայտում պետք է նշվի էլեկտրոնային փոստի հասցե: Աճուրդի մասնակցության վճարը լոտի մեկնարկային գնի 1 /մեկ/ տոկոսի չափով (բայց ոչ ավել, քան 300.000 ՀՀ դրամ), իսկ նախավճարը՝ 5 /հինգ/ տոկոսի չափով, մինչև հայտի ներկայացման

պահը պետք է վճարվեն պարտապան Հակոբ Ազատի Ձորոյանի անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում բացված թիվ 16069051960011 սնանկության հատուկ հաշվին, որպես ստացող նշելով պարտապանին: Հայտի ներկայացմանն առնչվող հարցերը, աճուրդի անցկացման և աճուրդի արդյունքներով պայմանավորված հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգով, որը համարվում է աճուրդի կանոնակարգ: Եթե լոտերի թիվը մեկից ավելի է, ապա դրանց աճուրդները կազմակերպվում են շարադրված հերթականությամբ: Լոտի աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը, որը լոտի վաճառքի գինը պարտավոր է վճարել աճուրդի օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում: Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման, անհրաժեշտության դեպքում՝ դրանից ծագող իրավունքների պետական գրանցման և/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու և/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը կատարվում են աճուրդի հաղթողի կողմից:
Լոտը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվանից 10 օրվա ընթացքում, աշխատանքային օրերին և ժամերին՝ դրա գտնվելու վայրում՝ նախապես պայմանավորվելով կառավարչի հետ: Լոտի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցերով կարող եք զանգահարել սնանկության գործով կառավարիչ՝ Ռ. Եղյանին հեռ. (055) 99-31-99:

37455993199

R.H.Yeghyan@gmail.com

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ Պ., 5 շենք, 408 սենյակ